

ՅԱԻԵԼՈՒԱԾ «ՀՈՐԻԶՈՆ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ

Նույնպես 2025

An illustration featuring musical notes and a tree. On the left, there are three staves of musical notation with green notes and stems. On the right, there is a brown tree with a thick trunk and bare branches, with several green leaves falling from it. The background is white.

Ձմեռնամուտ է. Գանատայի ծմբան եղանակի ծանր բնոյթը մեզի կը սորվեցնէ, թէ ինչպէս պէտք է կառչինք մեր արմատներուն եւ դիմանանք փոթորիկներուն, մեր երաժշտութեան պէս, որ դարերէ ի վեր ոչ մէկ կը կրցաւ լռեցնել, մեր ձեռքերուն պէս, որոնք անդադար կը վերակառուցեն եւ կը պայքարին: Աշունը ամէն հայու սրտին մէջ Արցախի վիշտը, մեր նահատակներու արեան ոգեկոչումը կը վերանորոգէ, իսկ ձմեռը իր փոթորիկներով մեր հայրենիքի այսօրուան ծանր պայմանները կը յիշեցնէ, բայց որքան ալ երկարի ձմեռը, պիտի գայ գարունը, պիտի կանաչանան ծառերը, պիտի ծաղկին ծաղիկներն ու դաշտերը, ինչպէս նաեւ օր մը պիտի գայ մեր երկրին գարունը, պիտի վերադառնան Արցախն ու մեր բոլոր գրաւուած հողերը:



Բայց Գառնին ոչ միայն պատմական վայր է, ան նաեւ բնութեան հրաշք է: Անոր իւրայատուկ մշակութային եւ բնական համադրութեան պատճառաւ տեղ գրաւեց UNESCO-ի Համաշխարհային Ժառանգութեան Ցանկին մէջ:

ՎԱՐՔ ՈՒ ՎԱՐՈՒԵԼԱԿԵՐԴ
«ԳՈՂՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ»

Անահիտ Պալեան

Պատահական է.
Բան մը կորսնցնել,
Հաճելի չէ:
Փնտռել, փնտռել
Ու չգտնել,
Նեղացուցիչ է:
Բայց վերյիշել
Թէ՛ վերջին անգամ
Ո՞ր ու երբ էր ան
Քու ձեռքերուդ մէջ,
Ու վերագտնել՝
Խնդութեամբ անվերջ,
Շատ հաճելի է:

Ու թէ չգտնես,
«Դռացիդ գող չիանես»:
Գողը ղվ է, գիտնա:
Գողը ան է,
Որ գաղտնի կերպով
Կը վերցնէ
Ու կը իրացնէ
Բան մը, որ ուիշինն է:



Մէկու մը «գող» ըսել
Մեծ անարգանք է,
Վիրաւորանք է:

Գողը վախկոտ արարած է:
Առածը կ'ըսէ
«Գող սիրտը թող»:
Ան վախ ունի,
Որ պիտի բռնուի
Եւ իր գողութիւնը՝
Բացայայտուի:

Գողութիւնը լաւ բան մը չէ.
Գողութիւնը մեծ յանձանք է:

«ԵՐԱԶԻ ՈՒԺԸ»

Ամէն գիշեր, երբ մեր աչքերը կը փակենք, մեր մարմինը կը սկսի իր ամենակարեւոր գործերէն մէկը՝ քնանալը: Քունը «ոչինչ ընելու» պահ չէ. անիկա կարեւոր ժամանակ մըն է, երբ ուղեղն ու մարմինը կը գործեն միասին:

Քնացած ատեն ուղեղը կը դասաւորէ յիշողութիւնները, կը զօրացնէ այն ինչ որ սորված ենք եւ նոյնիսկ կը մաքրէ ինքզինքը վնասակար մնացորդներէն: Մեր մարմինը կը նորոգէ մկանները եւ կը խթանէ աճումը:

Գիտնականները քունը կը բաժնեն փուլերու: Թեթեւ քունը այն պահն է, երբ կը սկսինք հանգստանալ: Խոր քունը, որ կը սկսի քնանալէն 30 կամ 60 վայրկեան ետք, մարմնի արիեստանոցն է, ուր աճումն ու բուժումը կը կատարուին: Իսկ REM «Rapid Eye Movement» (Արագ

Աչքի Շարժում) քունը այն պահն է, երբ ուղեղը աշխոյժ է, եւ երազներ կը տեսնենք: Այս փուլը կը զօրացնէ ստեղծագործութիւնը, խնդիրներու լուծումը եւ զգացումները:

Երեխաներու եւ երիտասարդներու համար քունը գաղտնի գերբնական ուժ մըն է. ան կը զօրացնէ սորվելու կարողութիւնը, տրամադրութիւնը, առողջութիւնը եւ աճումը: Հետեաբար՝ բաւարար քուն առնելը ծուլութիւն չէ, այլ ամենակենսական բանն է:



ՆՈՒՈԸ



Նուռը հայ ժողովուրդի ամենասիրուած պտուղներէն մէկն է: Անիկա կարմիր է, կլոր եւ ունի հարիւրաւոր հատիկներ: Նուռը ունի բազմաթիւ առողջապահական օգտակարութիւններ: Ան հարուստ է C եւ K կենսանիւթերով, կը նուազեցնէ արեան ճնշումը, կը խթանէ առողջ շրջանառութիւնը ինչպէս նաեւ կը զօրացնէ մարմնի բնական դիմադրողականութիւնը:

Նուռը ունի իր յատուկ նշանակութիւնը հայերուն մօտ, ան կը խորհրդանշէ միութիւն, առատութիւն եւ կեանք: Ամէն հատիկ կը յիշեցնէ, որ մարդիկ միասին ուժեղ են: Հին ժամանակներէն սկսեալ, նուռը տեղ գտած է հայկական հարսանիքներուն, նկարներուն եւ եկեղեցական զարդարանքներուն մէջ:

ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐԵԱՆ

Մարտիրոս Սարեան (1880–1972) կը ճանչցուի իբրեւ հայոց մեծագոյն նկարիչներէն մէկը: Ան ծնած է Նոր Նախիջեւան եւ ուսանած է Մոսկուայի մէջ, բայց իր ամբողջ կեանքը նուիրած է Հայաստանի բնանկարները, ժողովուրդը եւ ոգին նկարելու:



«Արարապ լեռան տեսարանը Երեւանէն»

Անոր ամենանշանաւոր գործերէն մէկն է «Արարատ լեռան տեսարանը Երեւանէն» (1923թ.): Այս կտաւին մէջ Սարեան պայծառ գոյներով կը պատկերացնէ լեռը, որ կը բարձրանայ քաղաքի վրայէն՝ լոյսով ողողուած: Սարեանի համար Արարատը միայն բնանկար մը չէր. ան հաւատքի, տոկունութեան եւ հայութեան ինքնութեան խորհրդանիշն էր:

Հայերուն համար Արարատը կը մարմնաւորէ յիշողութիւն եւ պատկանելիութիւն: Սարեանի վրձինով լեռը կ'ապրի, կը յիշեցնէ, որ արուեստը կրնայ դարերու պատմութիւն, հպարտութիւն եւ երազներ փոխանցել: Անոր տեսիլքը կը ներշնչէ երիտասարդ հայերը, որ գեղեցկութիւնը տեսնեն ոչ միայն բնութեան մէջ, այլ նաեւ իրենց ժառանգութեան:

ՔԵԶԻ ՀԱՄԱՐ, ԱՐԱՐԱՏ
(HERE'S TO YOU, ARARAT)

Գեղեցիկ-գեղեցիկ ես
Դուն, Արարատ, հեյ ջանե,
Նկարդ տարբեր է քու
Հայաստանի կողմէն, ջան,
Հոգուդ հոտը գալիս է ինձ,
Կենացդ,
Հեյ լի լայ լէ լու լու ջան,
Լէ լու լու ջան,
Հեյ լի լայ լէ լու լու ջան,
Ախ, Արարատ, ախ,
Ախ, Արարատ, ախ,
Ա'խ, Արարատ, ախ, Արարատ...

Հիմա հասկանում եմ քեզ,
Ինչ ես դու հայոց համար,
Մեր հոգուն հիմքը դուն ես,
Թագաւորն ես մեզ համար,
Խմում եմ ես քեզ համար,
Կրկ. Կենացդ...

Արարատ, մեր հին, սիրուն Արարատ,
Արարատ, սիրտս քո անունով,
Արարատ, մեր հին, սիրուն Արարատ,
Արարատ, սիրտս քո անունով...

Հինգ տարի նայում եմ քեզ.
Հայաստանի կողմէ, ջան.
Ամէն օր տարբեր ես դուն,
Արիր-տարիր ինձի, ջան,
Չեմ ուզում վերադառնալ.
Կրկ. Կենացդ...

Այդ օրը եկաւ, հասաւ,
Բաժնուելու քեզմէ, ջան,
Սրտով չեմ բաժնուում ես,
Խօսք տալիս եմ քեզի, ջան,
Մի օր չենք բաժնուի մենք.
Կրկ. Կենացդ...
Կրկ. Արարատ, մեր հին, սիրուն Արարատ...



Այս երգը սիրոյ եւ հպարտութեան երգ է,
նուիրուած Արարատ լեռան, որ ոչ միայն
բնութեան հրաշք է, այլ՝ մեր հոգեւոր ու
ազգային ինքնութեան խորհրդանիշն
է: Թէկուզ ներկայիս անոր գագաթը
թրքական սահմաններով շղթայուած
է, սակայն ան կը մնայ հայկական
երազներու, պատմութեան եւ մշակոյթի
անբաժան մասը:

«Քեզի համար, Արարատ» երգը կը
ներկայացնէ Լատանիա «Ladani-
va» խումբը, որ կազմուեցաւ 2019
թուականին եւ կը բաղկանայ
ժապին Պաղտասարեանէն, որպէս
գլխավոր երգիչ, եւ ֆրանսացի
բազմագործիքավորող՝ Լուի Թոմասէն:
Անոնց երաժշտական ոճը ոգեշնչուած է
տարբեր երկիրներու երաժշտութեամբ,
մասնաւորապէս աւանդական
պալգանեան եւ հայկական ոճով: Նշելի է
նաեւ թէ խումբի հրապարակած «Ժագօ»
երգով, խումբը իր մասնակցութիւնը
բերաւ 2024-ի «Eurovision»-ի
մրցումներուն եւ գրաւեց 8-րդ դիրքը:



Սուրբ Յակոբ Ազգային վարժարան



Յովհաննէս Շիրազ

Մոնթրէալի Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի Սարաֆեան նախակրթարանի
Զ(ա) եւ Զ(բ) կարգի աշակերտները իրենց հայերէնի ուսուցչուհի՝ տիկին Մարալ
Անթապլեանի հետ, սերտել ետք Յովհաննէս Շիրազի «Կտակ» բանաստեղծութիւնը
գրած են Արարատ լեռան մասին: Ստորեւ կը ներկայացնենք անոնցմէ մէկ քանին:



Բարեւ, Արարատ,

Ես քեզի պիտի հասնիմ եւ պիտի
պաշտպանեմ քեզ: Ես պիտի երգեմ եւ
պիտի աղօթեմ քեզի համար ու պիտի
սիրեմ քեզ:

Սիրտս քեզի կու տամ, Արարատ:
Երբ գագաթդ հասնիմ, հոգիս պիտի
ուրախանայ ու պիտի ծաղկի: Քու
անունդ այնքան սիրուն է, որ երեխաս
այդ անունը պիտի ունենայ:

Ես երբ քեզի նայիմ, կը Հայկանամ:

Ռուպինա Յակոբեան

Արարատ, դուն իմ կեանքս ես,
իմ հայրութիւնս ես, իմ ամենամեծ
թագաւորն ես, իմ քաջութիւնս ես,
իմ սիրահարութիւնս ես: Դուն իմ
ազատութիւնս ես, Արարատ, ու իմ
հպարտութիւնը:

Դուն իմ գեղեցիկ-գեղեցիկ Արարատս
ես: Քեզի նայելով կը հիանամ ու աղօթել
ետք կ'երագեմ...

Քրիսթֆօր Կագիս

Դէպի Արարատ

Քանի տարի քեզ կորսնցուցած,
Սակայն մեր սիրտին մէջ դեռ մնացած,
Ձիւնածածկ գագաթով,
Դուն դեռ կեցած ես ուժով:
Առանց քեզի տխուր ենք ու շնչատ,
Պիտի հասնինք գագաթիդ, Արարատ:

Սոֆի Թեմուրեան

Արարատիս

Արարատ, դուն ինձի համար շատ
գեղեցիկ ես: Ինձի ուժ կու տաս:
Առանց քեզի չեմ շնչեր: Արարատ, դուն
ինքնութիւնս ես, հայրենիքս ես: Կեանքս
քեզի կու տամ: Իմ յոյսս ես դուն: Դուն
հայրութեան խորհրդանիշն ես:

Սէրս քեզի հանդէպ չի մարիր, սահման
չունի: Ես կ'ուխտեմ, որ պիտի ազատեմ
քեզ ու միացնեմ քու ժողովուրդիդ: Քեզ
շատ կը սիրեմ իմ սիրուն Արարատս:

Քամի Հանէսեան

Արարատ, դուն կեանքս կը լուսաւորես: Երբ քու նկարդ
տեսնեմ, կ'ուրախանամ: Դուն ինձի կեանք կու տաս, արեւ
կու տաս, Արարատ, նոյնիսկ երբ կ'անձրեւէ: Դուն, հայու
համար շատ կարեւոր ես եւ շատ անուշիկ ես:

Արարատ, ամէն հայ քեզի համար կը կռուի: Դուն միշտ իմ
միտքիս մէջ ես: Դուն հայերուն համար ամենասուրբ լեռն ես:

Այլի Էլ Միւր

Իմ սիրելի Արարատ,

Դուն ինձի համար ամէնէն գեղեցիկ լեռն ես աշխարհի:
Քեզի հետ պաշտպանուած կը զգամ: Հպարտ եմ քեզմով,
որովհետեւ շատ մեծ ես ու գեղեցիկ: Ամէն հայ կը զօրանայ,
երբ քեզ տեսնէ, սրբազան լեռ, Արարատ: Իմ սիրտս
ուրախութեամբ կը լեցնես եւ մեզի աւելի հայրենասէր կը
դարձնես:

Իմ սիրելի Արարատ, Հայաստանի դրօշակը եւ անունը քեզի
կը պատկանին, որովհետեւ մեզի կեանք կու տաս:

Ռաֆայէլ Մարգարիտ

Արարատ, գեղեցկութիւնդ մինչեւ գագաթ,
Մեզի ուժ կու տաս յաղթելու անընդհատ,
Դուն մեր յոյսի զինանշանն ես,
Որ կարծես կը պոռայ «պէտք է պաշտպանես»:
Դուն մեզի քաջութիւն տուիր անկախանալու համար,
Պիտի հասնինք քեզի ամբողջ ժողովուրդով,
Պիտի կռուինք քեզի համար առանց դադար,
Նոյնիսկ եթէ վերջանայ նահատակներով:
Դուն իմ սիրտս կը լուսաւորես անդադար,
Ես քեզի պիտի յիշեմ ամէն դար:

Ռազմիկ Մանուկեան

Արարատ, սիրտս քու անունով կ'ուրախանայ: Հպարտօրէն
տեղդ կանգնած՝ հայ ժողովուրդին սիրտը կը զօրացնես:

Նոյնիսկ եթէ հայկական սահմաններէն դուրս մնաս, մենք
ամէն օր քու գեղեցկութեանդ կը սիրահարուինք եւ յոյսով
կը պայքարինք քեզի համար, որպէսզի քեզ վայելենք, երբ
անկախանաս:

Էլիսիա Գանիգարօ

Իմ սիրուն Արարատ,
Նոյնիսկ եթէ Հայաստանի մէջ չես,
Սրտիս մէջ մեծ տեղ կը գրաւես:
Դուն մեր վահանն ես,
Մեզի կը պաշտպանես,
Առանց քեզի ի՞նչ եմ ես:

Քամի Գազարեան

Արարատ
Արարատ, շատ կը սիրեմ քեզ,
Դուն անուշիկ ու թանկ ես,
Ամէն օր քու մասիդ կը մտածեմ,
Ու կը կարօտնամ քեզի:
Միշտ երազներուս մէջ ես,
Ամէն օր կ'ուզեմ տեսնել քեզ:

Արագ Աֆարեան

Անմահ ու անուշիկ Արարատ

Արարատ, դուն իմ ուրախութիւնս ու պայծառութիւնս ես:
Անուշիկ, գեղեցիկ Արարատ, դուն իմ ազգիս պատմութիւնն ես:

Իմ ժողովուրդս քեզ պիտի ազատագրէ, իմ անմահ լեռ, ու
շատ մօտ ատենէն մեր հողին վրայ պիտի փայլիս:

Ես քու ծինածածկ գագաթդ պիտի մագլցիմ, իմ թանկ ու
զօրաւոր Արարատ: Դուն, որ մի քանի հազար տարեկան ես,
դեռ կաս ու պիտի ապրիս:

Շէն Տարազճեան

Իմ հոգիս

Արարատ, իմ հոգիս, սիրելիս եւ կեանքս ես դուն:
Ինծի համար ատելի թանկագին բան չկայ այս
աշխարհին մէջ: Իմ յաւերժ եւ անմահ լեռ, դուն մեր
հպարտութիւնն ես, մեր ժողովուրդին դարաւոր
պատմութիւնն ես:

Ամէն օր դուն ատելի կը պայծառանաս ու կը փայլիս,
եւ քեզի հանդէպ իմ սէրս ատելի կը զօրանայ:

Լիլա Զապունեան

Իմ պաշտելի Արարատ, դուն ինծի կեանք կու տաս, ուրախութիւն եւ հպարտութիւն
կը պատճառես: Առանց քեզի չեմ կրնար ապրիլ ես: Թէեւ քեզ չեմ տեսած, բայց
կը խոստանամ, որ օր մը պիտի գամ Հայաստան միայն քեզ տեսնելու համար:

Դուն իմ ինքնավստահութիւնս ես, քաջութիւնս ես եւ հանգստութիւնս ես, դուն իմ
ինքնութիւնս ես: Շնորհակալ եմ, որ դուն կաս:

Ռիթա Կիլեան

Արարատ, դուն ինծի համար ամէն
ինչ ես: Ինծի համար կեանքիս
չափ կարեւոր ես: Կ'ուզեմ քեզի
հոգ տանիլ: Կ'ուզեմ քեզի հոգ
տանիլ, որպէսզի առողջ մնաս ու
ամէն անգամ, երբ քեզ տեսնեմ,
ատելի անուշիկ ըլլաս:

Արարատ, ես քեզ կը սիրեմ,
որովհետեւ գիս կ'ուրախացնես:
Կ'ուիստեմ միշտ պաշտպանել
քեզ:

Սաշա Մանուկեան

Լուսաւոր Արարատս

Արարատ, իմ սիրելի Արարատ, շատ
գեղեցիկ լեռ մըն ես: Ամէն մարդ, որ
Հայաստան կ'այցելէ եւ քեզ կը տեսնէ,
կը հիանայ քեզմով: Դուն ամէն հայու
ուժն ես: Քու ծինածածկ գագաթներդ
կը փայլին աչքերուս մէջ:

Արարատ, իմ թթուածինս ես դուն:
Առանց քեզի չեմ կրնար ապրիլ ես:
Հոգ չէ թէ Թուրքիոյ կողմն ես, դուն
միշտ կ'ապրիս սրտիս մէջ, իմ լուսաւոր
Արարատ:

Լորա Ճուրեան

Արարատին

Արարատ, իմ անմահ, Արարատ, երբ անունդ կը լսեմ, սիրտս կը ծաղկի ու
կը լուսաւորուի: Ինծի համար դուն թանկագին ես: Արարատ, դուն զօրաւոր
ես, անուշիկ ես ու պայծառ: Երբ քեզ կը դիտեմ, կը հիանամ քու ծինածածկ
գագաթներովդ: Դուն իմ հերոսս ես ու իմ թագաւորս ես: Ապագային կ'ուզեմ
Հայաստան այցելել, որ քեզ տեսնեմ: Այս բոլորը կը գրեմ, որպէսզի ցոյց տամ
քեզի, թէ որքան կը սիրեմ քեզ:

Շնորհակալութիւն, որ մեր բոլորին ուրախութիւն կը պատճառես:

Նարոյ Խաչերեան

Մեր հերոս լեռ

Արարատ, իմ սիրտս ես դուն: Առանց քեզի
իմ հոգիս նոյնը չէր ըլլար: Անուշիկ, հսկայ,
զօրաւոր լեռ, դուն միշտ իմս պիտի ըլլաս:
Հայաստանի ամենամեծ հերոսն ես դուն:

Պիտի կռուինք մինչեւ վերջ, որպէսզի քեզ ետ
բերենք: Գեղեցիկ ես դուն, Արարատ: Փոքր
Մասիս ու Մեծ Մասիս մէկ լեռ էք դուք:

Երբ քեզ տեսնեմ, կը հպարտանամ ու հայ կը
զգամ: Թագաւորներուն թագաւորն ես դուն:

Վագօ Մալխասեան

Իմ թանկ Արարատ

Արարատ, դուն շատ գեղեցիկ ու կարեւոր
եւ մեզի համար: Ես կը հպարտանամ
ու կ'ուրախանամ քեզմով: Դուն ծինով
հարուստ ես ու սպիտակ գագաթներդ՝
փայլուն:

Աստուած քեզ ստեղծած է մեր հայրենիքին
համար: Դուն մեր լոյսն ես: Արարատ, մեր
ամէնէն մեծ նուէրն ես:

Թամարա Մարգիրոսեան

Ո՞Վ Կ'ՈՒՂԷ ԸԼԼԱԼ ԲԱԶՄԱԳԷՏ

Նոյեմբեր ամսուան հարցումներու պատասխաններուն ժամկետն է 8 Դեկտեմբեր 2025: Հետեւաբար, սիրելիներ, արձանագրեցէք զանոնք թուղթի մը վրայ, նշելով ձեր անունն ու ձեր յաճախած դպրոցին անունը: Յետոյ ուղարկեցէք այդ թուղթը Հորիզոնի խմբագրատուն՝

3401 Olivar Asselin
Montréal, Québec
H4J 1L5

1.- Քանի՞ հիմնական փուլերէ կը բաղկանայ մեր քունը:
ա.- 1 փուլ
բ.- 2 փուլ
գ.- 4 փուլ

2.- Խոր քունը Երբ կը սկսի:
ա.- Հանգստանալու ժամանակ
բ.- 1 ժամ քնանալէ ետք
գ.- 10 վայրկեան քնանալէ ետք

3.- Գառնի տաճարը որ դարուն կառուցուած է:
ա.- երկրորդ դարուն
բ.- չորրորդ դարուն
գ.- առաջին դարուն

4.- Ո՞ր չաստուածին նուիրուած էր Գառնիի տաճարը:
ա.- Միհր
բ.- Անահիտ
գ.- Աստղիկ

5.- Նուռը որ կենսանիւթերով հարուստ է:
ա.- A եւ B
բ.- C եւ K
գ.- C եւ D

6.- Քրիստոսի որ առաքեալները կոչուեցան մեր երկրի առաջին լուսաւորիչները:
ա.- Մատթէոս եւ Մարկոս
բ.- Թադէոս եւ Բարթողիմէոս
գ.- Յովհաննէս եւ Ղուկաս

7.- Ո՞ր ծնած է Մարտիրոս Սարեան:
ա.- Նոր Նախիջեան
բ.- Մոսկուա
գ.- Երեւան

8.- Ո՞ր թուականին Մ. Սարեան գծած է «Երեւանէն Արարատի Տեսարանը» գծագրութիւնը:
ա.- 1923 թ.
բ.- 1880 թ.
գ.- 1972 թ.

9.- Երբ հիմնուած է Լատանիա խումբը:
ա.- 2019 թ.
բ.- 2020 թ.
գ.- 2024 թ.

10.- Ո՞ր երգով Լատանիա խումբը մասնակցեցաւ «Eurovision»-ի մրցաշարքին:
ա.- «Ժագօ» երգով
բ.- «Շաքար» երգով
գ.- «Քեզի համար Արարատ» երգով



Մանկապատանեկան Հորիզոնը կը հովանաւորեն ՀՕՄ-ի Գանատայի
Շրջանային վարչութիւնը եւ Գանատայի շրջանի իր 10 մասնաճիւղերը

Հեռաձայն (514) 332-3757
Email: sylvia@horizonweekly.ca
Խմբագրութիւն՝ Անահիտ Պալեանի
Թիւը պատրաստեց Լիլիթ Ժամկոչեան
Ձեայղացք՝ Լորի Խաչերեանի